ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/72 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների /բուժկետ՝ մոդուլային վեց դպրոցների համար/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 29.09.2023թ. ժամը 14:45-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան
Հովհաննես Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Դոնեռ»ՍՊԸ	donernorq@yandex.ru
2	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	medtechservice@mail.ru

3. Հակադարձ աճուրդի արդյունքում յուրաքանչյուր չափաբաժնի մասով համակարգի կողմից 1-ին տեղ գբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Ր	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«Դոնեռ» ՍՊԸ		Մեդտեխսերվիս ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	270000	225000	270000	-	-
2	552000	460000	552000	-	-
3	600000	260000	312000	-	-

4	312000	260000	312000	-	-
5	108000	90000	108000	-	-
6	270000	24999999	29999998	267000	267000
7	600000	24999999	29999998	594000	594000

5. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 02.10.2023թ

6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

6.1 «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է հավելված 1.3 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը, իսկ ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- հավելված 1 դիմում հայտարարության մեջ սխալ է նշված ընթացակարգի ծածկագիրը
- հավելված 1 դիմում հայտարարության մեջ նշված չափաբաժինները չեն համապատասխանում փաստացի համակարգում նշված չափաբաժիններին
- հավելված 1 դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- բացակայում է 1-5 չափաբաժիններով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Դոնեռ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել **«Դոնեռ» ՍՊԸ** -ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.10.2023թ.

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Դոնեռ» ՍՊԸ-** ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ 3-րդ չափաբաժնի մասով՝ չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.
1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դոնեռ» ՍՊԸ-ին:
6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9,2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.1 կետը, մերժել «Դոնեռ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

9.3 «Դոնեռ» ՍՊԸ-ի հայտը 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով մերժվել է համակարգի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի՝ 4-րդ ենթակետը, 3-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

10.2 Հաստատել.
10.2.1 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,
10.2.2 գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը
և Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի անգործության ժամկետ սահմանել վերենշված հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

10.3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Դոնեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմեն Ավետիսյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Հովհաննես Պողոսյան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/